

խաչով օրհնուած իւզը լեցնելու համար: Ուխտաւորք կը պատմէին թէ խաչով օրհնուած իւզը կ'սկսէր եռալ՝ այնպէս որ եթէ սրուակին բերանը չփակէին բոլորորովին պիտի ցնդէր: Այս իւզէն կը գործածէր Սաբա վանահայրը բժշկելու վիրաւորները և օրհնելու Սկիւթուպոլսեցի զիւահար աղջիկը:

Այս իւզին գործածութիւնը կը բարձրանայ մինչեւ Դ. դար: Մոնղայի (Իտալիա) գանձատան մէջ կը պահուէր սրուակ մը՝ որ կը կրէր այս արձանագրութիւնը. «Քրիստոսի Ս. Տեղեաց կենաց փայտին իւզը»: Է. դարու ուխտաւոր Արգուլֆ եպիսկոպոս կը գրէ. «այս թանկագին հեղուկին մէկ փոքր կաթիլն իսկ կը բաւէ բժշկել ամէն տեսակ հիւանդութիւններ» (տե՛ս P. P. V. A. II. էջ 205-6, և 233):

2. — Խաչափայտին նիւթին տեսակը. — Երբ ուխտաւոր մը Խաչափայտին նիւթին տեսակը հասկնալ ուզէր, անոր կը պատասխանէին թէ ընկուզենիէ շինուած էր: Այս եզական կարծիքին զաղտնիքը զիւրաւ կը բացատրուի, երբ միսթիք պատշաճեցումներով կիւրեղ Երուսաղիմացին Երզ երզոցի «ի պարտէզ ընկուզաստանի» (Չ. 10) խօսքով կը հասկնայ (Կոչ. ԺԴ. էջ 277) Յովսէփ Արիմատացիին պարտէզը՝ ուր Յիսուս խաչուեցաւ. կամ Paulin de Mole եպիսկոպոս (353-431) իր քերթուածներուն մէջ, խորհրդանշանական եղանակաւ մը, Քրիստոսը կը նկատէ ընկուզենիին բունը, և համեղ ու դառն ընկոյզն ալ՝ անոր խաչը (P. P. V. A. հատ. II. էջ 204-6):

ձէք զմա անուանելով, եւ զնոյն նովին ամառօք առ մի բս միոյէ միբեսպան իւրաբանչիւր ումեք վերսիս օրհնել. եւ այլն» (Մատեհագրութիւնք, էջ 7):